

# ՆԵՐՄԱՆ ԽՈՍՔ

Երբ սերն է խոսում. Յոթ խոսք խաչի վրա  
Մաս1

«Եվ շատ ժողովուրդ էր գնում նրա ետևից. և կանայք էլ, որ կոծ և սուր էին անում նրա վրա: Հիսուսն էլ դարձավ՝ նրանց ասեց. Երուսաղեմի աղջիկներ, լաց մի լինեք ինձ վրա, այլ լաց եղեք ձեզ վրա... ուրիշ երկու մարդիկ էլ տարան, չարագործներ, որ նրա հետ սպանեն: Եվ երբոր եկան այն տեղը որ Գազաթն էր կոչվում, այնտեղ խաչեցին նրան. և այն չարագործներին. մեկը աջ փողմին և միյուսը ձախ կողմին: Եվ Հիսուսն ասեց. ՀԱՅՐ, ԹՈՂԻՐ ԴՐԱՆՑ. որովհետև չգիտեն թե ի՞նչ են անում. և նրա հանդերձները բաժանելիս, վիճակ գցեցին: Եվ ժողովուրդը կանգնած մտիկ էր անում. իշխաններն էլ նրանց հետ ծաղր էին անում՝ և ասում. ուրիշներին ապրեցրեց, թող իրան էլ ապրեցնի, եթե դա է Քրիստոսն Աստծո ընտրվածը: Զինվորներն էլ էին ծաղր անում նրան. և մոտ գալով քացախ էին տալիս նրան. Եվ ասում. Եթե դու ես Հրեաների թագավորը, փրկիր քո անձը:» Ղուկաս 23:27-37

## Ինչ ենք Անում Սովորաբար Մեր Մեղքի Հետ

### 1. Թաղում, թաքցնում ենք

«Երբոր ես լուռ կացա՝ ոսկորներս մաշվեցան իմ ամեն օր հատաչելովը... իմ թացությունը ամառվան չորություն դառավ: Ես մեղքս հայտնեցի քեզ և անօրենությունս չծածկեցի. ասեցի թե՛՝ Անօրենությունս խոստովանեմ Տիրոջը. և դու թողեցիր իմ մեղքի անօրենությունը:» Սաղմոս 32:3-5

«Իր հանցանքը ծածկողը չի հաջողվի.» Առակաց 28:13

### 2. Մեղադրում ենք ուրիշներին

«Եվ Ադամն ասեց. Այն կինը, որ ինձ հետ տվիր, նա տվավ ինձ այն ծառիցը, և ես կերա:» Ծննդոց 3:12

«Մարդիս հիմարությունը ավերում է նրա ճանապարհը, և նրա սիրտը տրտնջում է Տիրոջ դեմ:» Առակաց 19:3

### 3. Ցավացնում ենք ինքներս մեզ

«Որովհետև իմ անօրենությունները գլխիցս վեր բարձրացան. ինչպես մեծ ծանր բեռ ծանր են ինձ վրա... իմ հիմարության համար: Ես կեռացած և խիստ ցած ընկած եմ, և ամեն օր ման եմ գալիս սգավոր:» Սաղմոս 38:4-6

## Ինչ է Ուզում Հիսուսը, Որ Մենք Անենք Մեր Մեղքի Հետ

### 1. Խոստովանենք

«Մարդիս հոգին Տիրոջ ճրագն է. նա քննում է սրտի բոլոր ներսերը:» Առ 20:27

«Քննենք մեր ճանապարհները և փորձենք...» Երեմիայի Ողբերը 3:40

### 2. Ընդունենք պատասխանատվությունը

«Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրենությունները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առաջին է:» Սաղմոս 51:3

«Իրար խոստովանեցեք ձեր հանցանքները, և իրար վրա աղոթք արեք, որ բժշկվեք:» Հակոբոս 5:16

### 3. Ներում խնդրենք

«Ապա թե մեր մեխքերը խոստովանենք, նա հավատարիմ է և արդար որ մեր մեղքերը թողի մեզ, և սրբի մեզ ամեն անիրավությունից:» Ա Նովիաննես 1:9

«Որովհետև ամենքը մեղանչեցին... Չրի են արդարանում նրա շնորհքովը՝ այն փրկության ձեռովը՝ որ Հիսուս Քրիստոսումն է:» Հռովմայեցիս 3:23-24

## Ինչ է Անում Հիսուսը Իմ Մեղքի Հետ

- Ներում է անմիջապես

«...և նա կողորմի նրան... որովհետև նա շատ ներող է:» Եսայիա 55:7

- Ներում է կատարելապես

«Իրան հետ կենդանացրեց ԲՈՒՈՐ մեղքերը ձեզ շնորհելով: Եվ ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը հրամաններովը որ մեզ հակառակ էր, և նրան վեր առավ մեջտեղիցը և խաչափայտին վրա բռնեց:» Կողոսացիս 2:13-14

- Ներում է շարունակաբար

«...Որովհետև (Քրիստոս) միշտ կենդանի է որ նրանց համար բարեխոսություն անի:» Եբրայեցիս 7:25

- Ներում է ձրիորեն

«Որով ունենք ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ նրա արյունովը՝ մեղքերի թողությունը իր ՇՆՈՐՀՔԻ մեծության չափովը:» Եփեսացիս 1:7

«Երանի նրան՝ ...որի մեղքը ծածկվեցավ: Երանի այն մարդին որ Տերն անօրենություն չի համարում նրան...» Սաղմոս 32:1-2

Հաջորդ Կիրակի: Հովիվ Մարո Խաչիկեան  
ՓՐԿՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ